

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ե Բ Կ Բ Ի Ս Զ Ո Ր Ս Կ Ո Ղ Մ Ը

Թէ որ հաւատք ընծայելու ըլլանք նախագուշակ նշանաց՝ որ չեն կրնար խարէական ըլլալ, այժմեան մարդկային սերունդն ամենամեծ գործ մի պիտի կատարէ, այսինքն հեռագրական թելով պիտի պատէ բոլոր գերկրագունտը: Այսպիսի կցորդութիւն մ'աշխարհաց ընդ աշխարհս՝ անհրաժեշտ պիտոյից կարգն անցած է հիմա, որ այնչափ աւելի զգալի պիտի ըլլայ՝ որչափ աւելի զարգանան ժովային ու ցամաքային յարաբերութիւնք:

Հեռագրական թելն արդէն իսկ մեծագէս յառաջացած է այսօր: Հիւսիսային Ամերիկոյ մէջ առանց ընդհատութեան կ'երկայնի 'ի Նոր-Երկրէ մինչև ցրդուամպիա անգղիական, միացընելով Ատլանտեան Ովկիանու փունքը Խաղաղականի փոխանց հետ: Եւրոպոյից և Ասիոյ մէջ կը ձգի 'ի Ճիպոնոսէրոյէ մինչև 'ի Քեախթայ՝ 'ի սահմանածայր Մոնկոլիոյ, և 'ի Սկիւտարէ՝ յափանց վոսփորի՝ մինչև ցիանկուն՝ Բեկուի տէրութեան մէջ, 'ի գետաբերանն իտալատտեայ: Հիւսիսային Ափրիկէ վաղուց մտած է այդ շրջանակին մէջ: Աւստրալիա ու գաղթականութիւնք ոմանք ունին շատոնց իրենց հեռագիրը, ինչպէս նաև Հարաւային Ամերիկոյ մէկ քանի աշխարհներն:

Այս թելերն թէպէտ կ'երկայնին հազարաւոր մլոն տարածութեամբ, սակայն առանձին ու կղզիացեալ են, և չեն կազմեր ամբողջութիւն մը: Պէտք է ուրեմն շարունակել զանոնք ըստ վաճառականական շահուց ու պիտոյից, և միացնել իրարու հետ, որով շրջապատել հեռագրաւ գերկրագունտս:

Դժուարին գործ. բայց գիտութիւնն և ճարտարարուեստք չեն գիտեր զբժուարութիւն. 'ի զլուս տանելու համար դայն՝ ահագին զուժար զրամոյ պէտք է. բայց հարկ է ճարել զայն,

վասն զի կարևորութիւնն ամենամեծ է ու շահն ամենաստոյգ:

Ինչպիսի յառաջագիմութիւն չըբաւելեկտրական թելն այս վերջին յիսուն ամաց մէջ: Գիւան եղաւ 1809ին. համառօտ գծի մը հաստատութիւնն Պալդիմոբայ և Ուոլինկղընի մէջ դեռ հազիւ երեսուն տարուան գործ է: Անգղիոյ մէջ առաջին ելեկտրական թելն դրուեցաւ 1839ին. բայց 1845էն ետքը հսկայաբայլ յառաջեց ու կարևոր դատուեցաւ վաճառականութեան:

Հիւսիսաբնակ Ամերիկացիք՝ որ ազգային սնապարծութեան հետ ինքնահաւանութիւն մ'ալ ունին, ուղեցին իրենց սեփականել ելեկտրական հեռագրոյ գիւտոյն պատիւը՝ սնդելով հակառակ ճամարտութեան: Պետրպուրկի ճեմարանին անդամակիցն Համել, 1857ին Գերմանիոյ Պոնն քաղաքին մէջ գումարուած բնախօսաց ժողովոյն մէջ ապացուցուց զօրաւոր փաստերով ու ժամանակագրական ճշդութեամբ, թէ այդ գիւտն, ինչպէս նաև վառօդի, տպագրութեան և ժամացուցի գիւտերն պարզապէս գերմանական են, և թէ Մորսի (Morse) ամերիկացին ամենեին արդիւնք չունի: Իմացուեցաւ դարձեալ 'ի քննութեանց Համելի, թէ 1809ին օգոստոսի 29ին Սէմմերինկ (Soemmering) գերմանացին ներկայացուց նախ Միւնիխի գիտութեանց ճեմարանին՝ ելեկտրական պատրաստութիւն մը, շարժեալ 'ի կալվանեան ելեկտրութեանէ, և մեկնեց ճոխաբար անոր սկզբունքները: Ուրեմն Միւնիխ քաղաքն եղաւ առաջին տեսող կալվանեան ելեկտրութեան հեռագրոյ:

Առաջին ելեկտրա-մագնիսական հեռագիրն շինուեցաւ 'ի Պետրպուրկ, և էր արդիւնք Պ. Շիլլինկի (Schilling), որ մէկ քանի անգամ տեսակցեալ էր 'ի

Միւնիխ Պ. Սէմմերինկի հետ : Էրսթէտ (Oerstedt) Դաննցուոյն մեծ գիւտն նըկատմամբ ազդեցութեան ելեկտրութեան 'ի վերայ մագնիսականութեան' 1820ին է : Շիլլինկ քիչ ետքը ջանաց յարմարել զայն հեռագրութեան արուեստին . և յաջողութեամբ Պետրպուրկի ու մոտաւոր դղեկի մը մէջ ելեկտրա-մագնիսական հեռագիր հաստատեց , որով հանգիստ ու ապահով կերպով կը խօսակցէստ : Պ. Վէպէր Կոդզինկա քաղաքէն՝ աշխատեցաւ նոյն գիւտոյն վրայ և կատարելագործեց զայն 1833ին : Պ. Շիլլինկ 1835ին մեկնեց իր պատրաստութիւնն Պոնն քաղաքին բնախօսաց ժողովոյն առջև , որուն ներկայ դատուելով Ֆոթհըրճիլ Գուք (Fothergill Cooke) անուն Սկոթլտիացի մը , միտքը դրաւ մտցնել յԱնգղիա ելեկտրական հեռագիրն և գործածել երկաթուղեաց : Նոյն անձը 1837 տարւոյն սիկզբները բարեկամացաւ Լոնտոնայի մէջ Ուիլսոն (Wheatstone) բնագիտին հետ , և կատարեցին իրենց առաջին փորձը հիւսիսային-արևմտեան երկաթուղոյն վրայ , 15 մղոն երկայնութեամբ թելով մը : Բայց երկու շաբաթ առաջ 'ի Միւնիխ , Շէպինայլ (Steinheil) իրարու հետ կցեր էր հեռագրաւ գիտութեանց ճեմարանին շէնքը Պոկենհաւանի գիտարանին և իր տանը հետ :

Սոյն ժամանակները Պ. Շիլլինկ կարծեց թէ գտած ըլլայ ելեկտրական թելը կղզիացնելու , որով և ջրոյ մէջէն ձգելու միջոց մը : Կը ջանար միացնել զՊետրպուրկ ֆրոնշդատի հետ՝ ջրոյ մէջէն , և շինել տուեր էր մէկ քանի պըղընձէ թելերէ բաղկացեալ լար մը կըզղիացեալ տեսակ մը պատրաստութեամբ . բայց մահն յանկարծ վրայ հասնելով՝ յափշտակեց զինքը 1837ին օգոստոս 7 : Անձանօթ էր այն ատեն կուշոյա-քերկան , որ ծանօթացաւ յետ 1846 ամին , թէ և Հնդկաց արշիպեղագոսին վայրենիք կը գործածէին զայն 'ի զանապաւն պէտս մէկ քանի դարերէ 'ի վեր :

Դառնալով Ամերիկացի Մորսինկարչին , այս է իր կենաց պատմութիւնը : 1832ին Եւրոպայէն Ամերիկա դառնալու ատեն , նաուեն մէջ կը բարեկամանայ իր մէկ ճանապարհորդակցին Պ. Ճաքսոնի (Jackson) հետ՝ Պոսդըն քաղաքէ , և կ'ընդունի իրմէ ինչ ինչ տեղեկութիւն ելեկտրական հեռագրոյ վրայ : Մորսի միտքը կը դնէ փորձել լաածները , և կը միաբանի քիմիագէտի մը հետ : Առոնք իրենց առաջին փորձերը կը կատարեն 1837ին սեպտեմբերի 4ին , այսինքն Շիլլինկի մահուանէն ամիս մ'ետքը , բայց չեն ունենար յաջող ելք : Ուստի սխալմամբ կ'ընծայուի իրեն այդ գիւտը . իսկ այն գործիքն որ իր անուամբ կը կոչուի , շատ ժամանակ ետքը գործածուած է :

Չէնք ուզեր երկայնաբանել այն մասնական կատարելագործութեանց վրայ՝ որ ժամանակին յառաջադիմութեամբն ու փորձողն մտան գործնականին մէջ : Ելեկտրական հեռագրոյ օգուտներն անգամ մը ճանչցուելէն ետքը , ամեն տէրութիւնք կը մրցէին իրարու հետ հաստատելու իրենց երկրին մէջ յարաբերութեան այդ նոր կերպը՝ տալով արագ բարգաւաճանք մը : Ասոր գտնուելովն օգամուղ հեռագիրն վերցաւ ու գրեթէ մոռցուեցաւ . վասն զի գանդաղ կը դործէր , և հարկ կ'ըլլար կրկնել նըշանք ամեն կայանին . և ոչ իսկ ապահով էր , և մեծ կախումն ունէր մթընդորոտին վիճակէն . այս անդիպութիւնն ալ ունէր , որ մի առ մի պէտք էր փոխանցել հեռագրերն թելին վրայ : Ելեկտրական հեռագիրն ազատ է յայտ ամենայն անպատշաճութեանց , և մանաւանդ գեղեցիկ յատկութիւններ ալ ունի , որոնք բաւական են մեկնելու իր արագ տարածումը յԱնգղիա՝ 1841էն սկսեալ 'ի Գերմանիա՝ 1852էն , 'ի Գաղղիա՝ 1846էն , և այսպէս հետզհետէ բոլոր ուրիշ կողմեր : Չկայ և եղած չէ այնպիսի բան՝ որ ազգաց ու ժողովրդոց վրայ այնչափ տպաւորութիւն ընէ՝ ինչպէս է ելեկտրական հեռագիրը , որոյ գիւտէն ետքը բաւականք էին մէկ քանի

վայրկեանք մեծամեծ գործեր կատարե-
լու, որոց համար առաջ շարաթնեցու
ու ամիսներու կը կարօտէին :

Դիրին էր միացնել ցամաքային հե-
ռագրական թեղերը, բայց կրնային ար-
դեօք ներքնածովային թեղեր ալ գնել
կանտնաւոր յարաբերութիւն հաստա-
տելու ծովանջատ աշխարհաց մէջ :
Դժուարին խնդիր : Յաջողեցան նախ
հեռագրոյ թեղ մը գնել ընդ մէջ Գաղ-
ղիոյ և Անգղիոյ՝ զիրար անջատող ծո-
վուն մէջէն, և ասով մեծ քայլ մ'ըրին
ու մեծ մղումն սուին այդ առարկու-
թեան : Այն բանն որ կրցաւ ըլլալ ծո-
վու պղտի սահմանին մէջ, կրնար ըլ-
լալ, թէպէտ կրկնապատիկ աշխատու-
թեամբ, նաև 'ի սահմանս ընդարձակ
ծովուց : Նորանոր փորձերն միշտ ա-
ւելի ակնկալութեան դուռ բացին, և
1858ին ալ բորթովին լուծուած հա-
մարուեցաւ Ռիկիանու մէջէն հեռա-
գրական յարաբերութիւն հաստատե-
լու ծանր խնդիրը :

1858 տարւոյն ամսօր մեծ խնդրոյ
մը լուծումն տուաւ : Անդրատլանտեան
հեռագիրն՝ հաստատեալ 'ի ծովու ընդ
մէջ Եւրոպիոյ և Հիւսիսային Ամերիկոյ,
Վալենցիա կղզիէն Խուլանտայի մօտ՝
մինչև ցՍ . Յովհաննէս Նոր-Էրկրի,
զանազան նշաններ փոխանցեց . 'ի
շարժման էր գրեթէ քսան օր, և քառա-
սունի չափ հեռագիրը երթևեկեցին եր-
կու կիսագնտից մէջ : Ստկայն յանկարծ
դադրեցաւ ու ալ չէր ծառայեր . բայց
գէթ ցուցուեցաւ անհերքելի փորձով
'ի մեծ հեռաւորութենէ խօսակցելու
կարելիութիւնը . արգելքն պատրաս-
տութեան թերութենէ մը յառաջ զայր
կամ դործադրութեան մէկ անկատա-
րութենէ : Այս համազումը այն աստի-
ճան ընդհանրացաւ ամեն կողմ, մա-
նուանդ յԱնգղիոյ, որ մտածեց առանց
լքանելու լաւագոյն և ապահովագոյն
միջոցներով նոր թեղ մը ձգել Ատլան-
դականի մէջէն, և միացնել ուղղակի
երկու կիսագունտերը : Լրագիրը հըռ-
չակեցին մէկէն որ 1865 տարին ա-
ռանց այս մեծ գործոյն կատարման

պիտի չանցնի : Երախուց համար գու-
մարուած դրամը 20 միլիոն ֆրանքի կը
հասնէր : Կե՛ծ թեյն որ սկսաւ 1864
տարւոյն ապրիլ ամսոյն մէջ, լմննցաւ
տասն և հինգ ամիս ետքը, և նոյն տա-
րւոյն յուլիսի 12ին բազմախումբ հան-
դիսատեսից ներկայութեամբ՝ մալու-
խին այն մասն որ կ'ըսուէր մալուշի Տոլ-
ալիսն, կապուեցաւ ցամաքին հետ .
և երկրորդ օրը մեծամարմին շոգեմուշ
նաւն Լէ:իւրսն, որպէս թէ մասնա-
ւոր անոր համար շինուած ըլլար, մեկ-
նեցաւ յափանց, տանելով հետը բոլոր
Անգղիոյ յոյսը : Հետեւեալն յայտնի է :

Մենք փոխանակ երկարելու այդ մե-
ծագործ ձեռնարկութեան անցից պատ-
մութիւնը, ըսենք որ՝ Պ . Շէֆֆէր
(Scheffer) գերմանացին, Ամերիկոյ
Պոսթըն քաղաքէն, ասկէ քսան տարի
առաջ մտածեց միացնել հեռագրաւ
երկրագնտոյս ամեն կողմերը : 1854ին
առաջարկեց Ռուսիոյ Նիկողայոս Կայ-
սեր՝ կցելու իրարու հետ բոլոր իր կայ-
սերութեան գաւառները, ընդ որ հա-
ճեցաւ Նիկողայոս : Պ . Շէֆֆէր կ'ու-
ղէր որ Ռուսիա ձեռնտու ըլլայ ամե-
նայն փոխթով հաստատելու հեռագիր
մը՝ որ մեկնելով հիւսիսային Ամերի-
կայէն՝ անցնի զԻրէլանտիա, զիռլան-
տա և Ֆէրէօրեան կղզիները, և միանայ
Եւրոպական թեղից հետ . ուրիշ թեղ
մ'ալ՝ որ մեկնի Մոսկուայէն, կտրէ
Ղևսիա ռուսական և զԱմերիկա մինչև
'ի Ս . Փրանկիսկոս Գալիֆոռնիոյ . իսկ
յատուկ և բացարձակ ռուսական թեղն
պիտի շոշափէր զիտզան, անցնէր զՌու-
սայ, կտրէր զ(մ)ք և զԻրըուսդք, և
պիտի հասնէր 'ի Քեալսթայ Մոնկո-
լիոյ և Չինաստանի սահմանաց վրայ :
Իրըուզքէն պիտի շարունակուէր մէկ
կողմանէ դէպ 'ի խառնուրդս Ամուրի,
և միւս կողմանէ պիտի հասնէր յինչ և
է կէտ ափանց Գամաղաքայի կամ Պե-
հրինկի նեղցին վրայ, անկէց ալ զիւ-
րութեամբ Ամերիկա անցնելու :

Այս դիժերէն շատերը հիմա գոր-
ծադրուած են . ցամաքային շրջանին
ամբողջութեան համար կը պակասին

միայն մէկ քանի գիծք 'ի Սիպերիա և Ամերիկոյ հիւսիսային արևելեան կողմը : Յայտնի է թէ մեծ ծախք կը պահանջուի , բայց ուրիշ դժուարացուցիչ արգել մը չկայ , մինչդեռ ներքնածովային հեռագիրն ինչ է այդ տեսակ արգելներով , թէ և անդրատլանտական յաջող փորձերէն ետքն այդ արգելներէն շատերն ոչնչացած են :

1850ին օգոստոս ամսոյն մէջ ներքնածովային հեռագիր մը հաստատուեցաւ Տուվրի ու Քալէի մէջ , որոյ յաջողութիւնն ճամբար բացաւ այլոց ալ յաջորդ ամաց մէջ : 1855ին փորձեցին զնոյն յԱմերիկա . կ'ուզէին միացընել Պրեզզոնէ գլուխը Նոր-Երկրի հետ . և թէպէտ չյաջողեցան , բայց չի լքանելով արգելից մեծութենէն , հաստատապէս դրին մտքերնին ներքնածովային հեռագիր մը հաստատել Ամերիկոյ ու Եւրոպիոյ մէջ :

Ամեն բանէ առաջ պէտք էր կապել Միացեալ-Նահանգներն Նոր-Երկրի հետ : Պոսզընէն մինչև այդ նաւամատոյցն եղած հեռաւորութիւնն է անդրիական 600 մղոն : Թե՛ն կ'անցնի Նոր-Պրունսվիք անդրիական գաւառին մէջէն , քերէ զափունս Ֆունտի աւազակուտին Նոր-Սկոտլանդի հիւսիսակողմը , կը կտրէ Գանսոյ ծովուն մէկ թևը , կ'ուզի դէպ յարևմտեան ափունս Պրեզզոնէ գլխոյն և կը հասնի Ասքի աւազակոյտը , հիւսիսային լայնութեան 47 աստիճանին տակ . և հօն կը խորասուզի 'ի ծով մինչև 'ի Բորոյ Պապոյ , Նոր-Երկրին արևելեան ծայրին մօտ : Ներքնածովային հաղորդակցութեան առաջին փորձը՝ 86 մղոն հեռաւորութեամբ երկու կիտից մէջ վրիպեցաւ . բայց երկրորդն զոր փորձեցին յաջորդ տարին՝ յաջողեցաւ : Բորոյ Պապոյէն կ'ընթանայ հեռագիրն ուղիղ գծով դէպ 'ի արևելք , կը կտրէ 88 գերմանական մղոն տեղ թանձրախիտ անտառաց մէջէն , և կը շոյափէ Նոր-Երկրին արևելեան եզերքը : Այս ընդարձակ տարածութեամբ միջոցի մէջ հինգ կայանք կան միայն :

Յետոյ կը մտածուէր ներքնածովային հեռագիր մը գնել , որ մեկնելով Նոր-Երկրին Ս . Յովհաննէս կղզիէն՝ հասնի 'ի Վալենցիա՝ յիւլանտա , 1650 մղոն միջոց տարածութիւն ուղիղ գրծով : Ատլանտեան հեռագրոյ ընկերութիւնն եռանդեամբ ձեռք զարկաւ գործոյն , վստահ անոր յաջողութեանը , բան զի ապահով էր ջրաբաշխական քննութեամբ՝ որ Ատլանդականին յատակն չունի շատ դժուարացուցիչ արգելներ . այլ մեծատարած հովիտ մ'է երկու կիտից տից մէջ անդգալի անհարթութեամբ , որ և կոչեցաւ հեռագրական դաշտադետին Ուիլիամս : Ամենէն նուազ խորութիւն ունեցող կէտը Մեխիգոյի ծոցն է , անոր համար թե՛ին ծայրը նոյն երկրին հիւսիսակողմը մտածեցին հաստատել , ուր խորութիւնն չէր աւելի քան 42,080 կանգուն , յենով հաստատուն հիման վրայ :

2,500 անգղիական մղոն երկայնութեամբ թե՛ն աւարտեցաւ . 1857ին յամառան , (զոր զետեղելու համար սահմանուած էին վեց շոգեմուղ նաւեր) , որ ապա կտրեցաւ : 1858ին ուրիշ փորձ մ'ալ ըրին և չյաջողեցան . բայց այդ մեծախորհուրդ ձեռնարկն վերջապէս ամբողջացաւ : Նոյն տարւոյ յուլիսի 18ին խուսմբ մի շոգեմուղ նաւաց մեկնեցան Գուինստունէն (Queenstown) , և նոյն ամսոյն 29ին միացուցին թե՛ին բաժանեալ ծայրերը , և օգոստոսի 7ին անդրատլանտեան հեռագիրն կը զրկէր իր առաջին լուրերը : Այս գործոյն համար 1,280,000 տոլար ծախք եղաւ :

Միաբան-Նահանգաց Նախագահն Պրոքանան (Buckanan) ելեկտրական թելով ուղղոյն առաքեց Վիկտորիա թագուհոյն , ու կ'ըսէր . « Հանրազգային այս մեծ ձեռնարկութեան յաջողութիւնը շատ աւելի պատիւ կը բերէ քան ինչ որ աշխարհակալի մը պատերազմի դաշտը . վասն զի սա աւելի օգտակար է մարդկութեան » : Յերաւի այդ փորձի նաւախումբն որ ներքնածովային հեռագիրը հաստատեց՝ չքեղ ևս

յաղթանակ գործեց քան ինչ որ նա, ւատորմիդք պատերազմականք . վասն զի անարիւն գործ մը կատարեց յօգուտ խաղաղութեան, քաղաքակրթութեան և վաճառականութեան : Բայց շատ չանցաւ հակայաչէն գործն զաղարեցաւ նորէն 'ի շարժմանէ . թե՛ն կը մերժէր աւանդելու իրեն եղած յանձնարարութիւնները . ուստի ուրիշ անգամ մ'ալ 'ի դերեւ ելան Ուիլիանու երկու կողմանց ակնկալութիւնները :

1864 զարձեալ ձեռք զարկին գործոյն : Հաշուի առին բոլոր այն վտանգները՝ որ կրնային սպառնալ կենաց ու տակալանութեան ծոգուն խորոց մէջ ձգուելիք թեւիւն : Ոչ թէ միայն այն վտանգները կը մտածէին որ բնականօրէն խորութեան կամ բնութեան յատակի ծովուն՝ որոյ վերայ պիտի հանգչէր թե՛ն, այլ կը հաշուէին կամ կ'ուզէին առջևն առնուլ այն վտանգաց ալ՝ որ կրնային յառաջ գալ 'ի մեծամեծ մագնիսական հոսանաց երկրազննոյս, Ուիլիանու ջրոց մեքենական կամ քիմիական ազդեցութենէ և կենդանեաց յարձակմանէ : Լարն կը բաղկանար յետիւն թեւից, կզգիացեալք կոռոյտքերկէ հինգ կարգ պատենից մէջ, և բոլորն շրջապատեալ էր տասն հաստատուն երկաթէ թեւերով, պատեալք իւրաքանչիւրն կանեփէ շուանով :

Թուէր թէ զամենայն ինչ զուշակեցին և կը կարծէին թէ ամենայն վտանգաց առջևն առած ըլլան : Սակայն յուլիսի 25ին՝ հիւսուածն դիպուածով մը ծակուելով երկաթի թեւէ՝ կզգիացումը քիչ մը ժամանակ ընդհատեալ մնաց, բայց մէկէն դարմանեցին : Օգոստոսի 2ին կզգիացման ուրիշ պակասութիւն մ'ալ անդրադարձան երրորդութեան աւազակուտին մէջ, և յետ անյուր աշխատութեանց՝ կրցան այդ խանգարման ալ առջևն առնուլ :

Այն վայրկենին յորում թայմզ կը ծանուցանէր անդրատլանտեան թեւին որոշակի հաստատուիլը, կ'ըսէր նաև թէ չկայ անկէց ետքը ուրիշ արգել խափանարար հեռագրական յարա-

բերութեան ընդ մէջ Եւրոպիոյ և Հընդկաց : Այս թե՛ն էական մատանի մ'է ցամաքային հեռագրութեան շղթային, զոր երկու խօսքով բայատրենք :

Ունինք մեր առջին ամիս-ամերիկեան հեռագիրը, որ պիտի կայէ Եւրոպան Նոր-Ալխարհին հետ, և է իւր հետեւութիւն մ'անդրատլանտեան հեռագրին : Երկրագնաց զանազան կողմանց մէջ եղած յարաբերութեանց ընդարձակութեան նայելով, թե՛ մի միայն հեռագրոյ չէր բաւեր ամեն պիտոյից . առանց յիշելու այն վտանգներն որոց ենթարկեալ է միշտ ներքնածովային թեւն, օգտակար ու կարևոր էր որ այն գծէն զատ ուրիշ մ'ալ հաստատուի ցամաքային : Ստոյգ է թէ ասիակա ալ պիտի ունենար իր ներքնածովային մասերը, բայց համամատարար աւելի քիչ տեղ, որով դարմանն ալ դուրագոյն կ'ըլլար հօս՝ քան Ուիլիանու ալեաց մէջ :

Կ'ըսուէր որ Ռուսիոյ ու ամերիկեան գործակատարաց մէջ եղած խօսակըցութիւնն հեռագրոյ նկատմամբ յաջող ելք մ'ունեցած ըլլայ : Կայսրն վառուցաւ առ այն, և արտօնութիւններ խոստացաւ անոնց՝ Ռուսիոյ ամերիկեան կալուածոց և հիւսիսային Ասիոյ թեւից վրայ մինչև յԱմուր : Ռուսիա միտքը դրաւ լրացնել շուտով իրբուղաքի և Սապարովքայի գիծը, խազանէն մինչև 'ի Գեախիսայ եղած գիծն կը միանար եւրոպական գծից հետ . կ'անցնէր գնուրալ, և քերելով գՕմաք և գիրբուղաք, կ'երթար մինչև յիրպիդ, 10,725 վերստ երկայնութեամբ միջոց տեղ :

Գամաքային հեռագրութեան նախագիծ օրինակ մը շինուեցաւ խորին քննութեամբ . զոր լաւ ըմբռնելու համար պէտք է առնուլ 'ի ձեռս ալխարհացոյց տախտակ մը, և հետեւել մտք թեւին ընթացիցը : — Բայց ինչպէս հարորդեալու էր զայն Ասիոյ, և երկայնեւ մինչև ցԱմուր . կարելով Պեհլին կի նեղուցը թէ անցնելով Ռոմանզով գլուխն : Մտածուեցաւ նախ անցնել զթեւն Ալէուզեան կզգեաց երկայնու-

Թեամբ . բայց ապա 'ի բաց թողուեցաւ այդ խորհուրդը , վասն զի տեսան որ այդ ճամբան կը կարօտէր բազում ներքնածովային զծից :

Ամերիկացի դործակատարաց ներկայացուցիչն էր Բերի Մաք Տօնրֆ Բոլինս (Perry Mac Donough Collins) , որ տասն տարի աշխատեցաւ վաճառականական յարաբերութեանց միջոց մը գտնալու ընդ մէջ Հնդկաց և Ամերիկոյ : Սա վարանկելի Սիպերիոյ վրայ գրած մէկ դիրքը կարգալով , իր բոլոր մտազբօթիւնը ուղղեց այդ լայնածաւալ աշխարհին վրայ , բազմամուր , անտառապատ և հարուստ մեծագին մետաղներով : « Ունի Սիպերիա , կ'ըսէր նա , բազում բնական գեղեցիկ յատկութիւններ 'ի վաճառականութիւն , որոնք գործածուելու համար ճամբու մը կը կարօտին դէպ , յովկիան : Տասն տարի առաջ կը բնակէի 'ի Գալիֆոռնիա , և բոլոր մտազբօթիւնս դարձած էր 'ի վաճառականութիւն թաղաղական յովկիանու հիւսիսակողման : կը մտածէի թէ ինչպէս կարելի էր միացնել Ամերիկոյ ափունքը Ասիոյ ափանց հետ , առ որ միակ ճանապարհ թուեցաւ ինձ Ամուր գետն , և անկէց մտնել Հիւսիսային Ասիոյ անծանօթ կողմերը , որ կ'ընծայէին քաղաքակառուցեան բոլորովին նոր սահման մ'աշխարհակալութեան : Իմացայ որ Ռուսք գրաւեց էին Ամուրի շրջակայքը , և չէնք մը կանգներ անոր բերանը : Այդ գրաման ծանր հետեանքն խոցեց զիս . գնացի յուռչինկոզըն աւելի ճիշտ տեղեկութիւն մը ստանալու . վասն զի քիչ տեղեկութիւն ունէին 'ի Գալիֆոռնիա Ամուր գետոյն վրայ , քանզի հաստատուած չէին ուղղակի յարաբերութիւնը » :

Փոյինս Միարան-Նահանգաց վաճառականական հիւպատ անուանելով՝ Ամուրի վրայ , պաշտօնական երևոյթ մ'առաւ , և գնաց 'ի Պետրպուրկ , անկէց ալ զՈւրալ և զՍիպերիա անցնելով՝ Ամուրի գետաբերանը երթալու համար : Ամենայն ուրեք լաւ ընդունելութիւն

գտաւ , մանաւանդ 'ի կառավարչէն արևելեան Սիպերիոյ :

Բազում շոգեմուղ նաւեր պատուեցին Ամուր գետը , հեռագրական թելը հաստատելու համար : Քոյինս զուլս և հոգի եղաւ գործոյն՝ որ յանձնուած էր ամերիկեան ընկերութեան մը . շինութեան ծախքը՝ Նիւ-Եօքսէն մինչև Ամուրի գետաբերանը՝ է 12 միլիոն տոլար : կը մեկնի թելն Գեախթայէն , կը կարէ Ամուրի երկայնութիւնն մինչև 'ի Խառնուրդս նորա 'ի ծովն Օխոթսքայ . 2000 մղոն երկայնութիւն : Ամուրի գետաբերանէն կը շարունակուի թելն Օխոթսքայ ծովուն հիւսիսային ափունքէն , և կ'ուղղի 'ի Փենչինսքոյ , 'ի հիւսիսակողմանս Գամպադքայ թերակղզւոյն . ապա կ'առնու հարաւային-արևմտեան ուղղութիւն մը գէպ 'ի Անատիւր ծոց , գրեթէ 'ի մուտս Պեհրինկի նեղջիւն : Թեւէն կը շարունակուի ծովէն մինչև 'ի Լաւրենտիոս կղզի , և անկէց ալ մինչև Ամերիկեան ցամաքը : Ռուսաց Ամերիկային ափունքէն և անգղիական Գոլումպիայէն անցնելով կ'երթայ կը միանայ միւս թելից հետ , կըտրելով բոլոր զԱմերիկա յարևմտից յարևելս մինչև 'ի Նոր-Երկիր :

Պէտք էր ապա հաստատել ուրիշ երկու զիծ մ'ալ միացնելու զՌուսիա վերին ու վարին Հնդկաց և Աւստրալիոյ հետ : Ասոնցմէ մէկն պիտի բաժնուի Սիպերիոյ մեծ հեռագրութեան թելէն Օմսք գաւառին մէջ , պիտի իջնայ 'ի Թուրքաստան , կտրէ զԱֆղանստան , և պիտի միանայ 'ի Փէշաւէր Հնդկային թելից հետ : Այսպէս մէկ կողմանէ պիտի միանայ այն զծին հետ որ կը ձգի մինչև 'ի գետաբերանն իռավատտի , և միւս կողմանէ այն զծին հետ որ կը մեկնի Գարգանիէն , ոչ հեռի 'ի գետաբերանոյ Ինդոսի , և կ'ուղղի 'ի Պասրա , անցնելով զՄիջագետս , զՀայաստան , զՓքքը Ասիա մինչև 'ի Կ-Պոլիս :

Իսկ երկրորդ թելն պիտի երթայ 'ի Գեախթայէ Մոնկոլիոյ վրայէն մինչև 'ի Բեքին , և յափանց Չինաստանի մինչև 'ի Գանդոն : Պիտի երկայնի մինչև 'ի

Ֆորմոզա կղզի, 'ի փիլիպպեանս, պիտի անցնի Նոր-կուինէայէն՝ յԱւստրալիա, և նոյն ցամաքին հարաւակողմէն մինչև 'ի Մելպուռն: Աւստրալիոյ հիւսիսակողմը պիտի միանայ այն թելին հետ, մեծաւ մասամբ ներքնածովային, որ կու գայ վարին Հնդկաստանէն, շոշափելով ձաւա, Ֆլորէս և Թիւմու կղզիները:

Ռանկունէն մինչև Իռավատտեայ գետաբերանը, ուր կը լմըննայ հնդկային հեռագիրը, եղած հեռաւորութիւնն է գրեթէ 4000 մղոն: Թէ որ Ռանկունէն մինչև 'ի Սինկարուր ցամաքազնաց թել մը հաստատուելու ըլլայ, պիտի կտրէ գրեթէ ամեն կողմ՝ անքնակ երկիրներ և ընդարձակածաւալ անտառներ, անցնելով հինգ անկախ և բարբարոս ազգաց մէջէն: Իսկ թէ որ ծովէն հաստատուելու ըլլայ, ամեն կողմ ըստ մեծի մասին բուստէ ծովային յատակ մը պիտի գտնայ: Թինզեռ կարմիր ծովուն մէջ ձգուած հեռագրով ցուցուեցաւ թէ ինչպիսի հետիւտքներ կ'ունենայ այդ տեսակ յատակ մը, զոր յետ մեծամեծ ծախուց պարտաւորեցան զուրս հանել: Սինկարուրէն մինչև 'ի Հոն-ֆոնկ, հարաւային Չինաստանի մէջ, 4,500 մղոն հեռաւորութիւն կայ. այս գծով փութորկայից ծովու մը մէջ կը դրուի թելն որ ամենախոր է և ամենակին միջավայր կայան չունի: Իսկ ընդ հակառակն Սինկարուրի ու Պաղաւիոյ մէջ եղած ծովն թէպէտ չունի այնչափ մեծ խորութիւն, բայց յատակն բոլոր բուստով պատած է: Պաղաւիայէն մինչև 'ի զըլուկն Եօթը, հիւսիսային կէտ Աւստրալիոյ, ծովային հեռաւորութիւնն Թիմորի վրայէն 2000 մղոնէն աւելի է: Միւս գիծն Ասիայէն յԱւստրալիա, գրեթէ 1000 գերմանական մղոն է, և թելն պիտի անցնի շատ տեղ բուստի վրայէն որ վտանգաւոր է:

Երկրագնստոյ չրջապատ հեռագրական գծոյն ամողջութեան համար կարևոր է ուրիշ գիծ մ'ալ 'ի Հնդկաստանէ 'ի Վոսիոր, որ միացնէ զՀնդկա-

ստան՝ Ասիոյ և Եւրոպիոյ միոյ մասին հետ: — Մեծապէս կարևոր էր Անգղիոյ համար ապահով և պատրաստական միջոց մ'ունենալ յարաբերութեան Հնդկաստանի հետ: Նախ փորձեցին անցընել թելը կարմիր ծովէն. բայց 25 միլիոն ֆրանք ծախելէն ետքը, համոզուեցան որ այդ գիծն ապահով էր, ուստի հարկեցան ընտրել միւս գիծն որ կ'երթայ Պարսկային ծոցէն 'ի ֆորը Ասիա Միջագետաց մէջէն:

1848էն սկսեալ Անգղիա հեռագրոյ ծրագիր մ'առաջարկեց Բ. Դրան ընդ ֆորը Ասիա և ընդ Միջագետս: Օսմանեան կառավարութիւնն նպաստելու զելով նոյն խորհրդոյն, իր ծախիւքը հեռագրոյ թել մը հաստատեց 'ի Կոստանդնուպօլսոյ կամ 'ի Սկիւտարէ մինչ 'ի Պաղատա՝ Տիգրիսի վրայ. որ ունէր 1,314 անգղիական մղոն երկայնութիւն: Անգղիոյ կ'ընկնար գալ Հնդկաստանէն, և միանալ նոյն գծին հետ:

Հնդկաստանի հեռագիրը կը ձգի հիւսիսային-արևմտեան ուղղութեամբ մինչև 'ի Նաւամանոյցն ֆարրալի 'ի գետաբերանն Ինդոսի, որ մեծաբայլ յառաջեց սակաւ ամաց մէջ: Պէտք էր ցամաքէն շարունակել նոյն թելը, 'ի հիւսիսային ափանց Էօմենայ ծոցին. բայց նախ քննելու էր անձանօթ ափունքները՝ Մեքրանէն մինչև ցիուատէլ: Միջոցն է 340 մղոն երկայնութիւն, և կը բաղկանայ մաս մի 'ի Պելուճիստանայ, որ մերկ ու անջուր առապատ մ'է:

Երկիրը քննելէն ետքը Ուոլտըն (Walton) ճարտարապետն վրան առաւ գործոյն կատարումը, և 600 ասիացի գործաւորաց օգնութեամբ կրցաւ հաստատել թելը մինչև 'ի Կուատէլ, ուսկից պիտի անցնէր Էօմենայ ծոցը ջրոյ տակէն:

Անհամեմատ բարեաց' որ հեռագիրն ընդհանրանալով բերաւ ժողովրդոց նիւթականին ու մուսորականին վրայ, մեծք արդէն իսկ վկայ ենք. բայց ապագային մէջ աւելի ևս պիտի ստուգուի: